

**Վ.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ,
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀՀ ԱՎԾ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել՝ տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն: 2010թ. ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են աշխատանքներ հետևյալ նախագծերի շրջանակներում.

1. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ. Բարձրացնել գործընկեր պետական մարմինների կարողությունները ազգային և մարզային մակարդակով «ԱրմենիաԻնֆո»-ի մեկնարկային գործարկման հարցում՝ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) և Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) գծով արձանագրած առաջընթացը մշտադիտարկելու և լուսաբանելու նպատակով:

2. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ.

- 2010 թ. «ՏՐԱՆՍՄՈՆԵԵ» ծրագիր,

- Մանկական աղքատություն

3. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և ՀՀ ԱՎԾ-ի միջև ստորագրված Փոխընթացման Հուշագրի ներքո.

- Համայնքների տեղական իրազեկման ցանցի միջոցով կանանց հանդեպ բռնությունների վերացման համար ներուժի ամրապնդում

4. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի օժանդակությամբ.

- 2011 թ. Հայաստանի մարդահամար

5. Համաշխարհային բանկի օժանդակությամբ «Վիճակագրական հզորությունների կառուցման TF 097400 դրամաշնորհի» շրջանակում.

- «2011թ. Հայաստանի բնակչության մարդահամարի փորձարկման և նախապատրաստման աշխատանք»

6. «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի և ՀՀ ԱՎԾ միջև ստորագրված պայմանագրի շրջանակում.

- «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» ենթածրագիր

7. Ասիական զարգացման բանկի օժանդակությամբ տարածաշրջանային տեխնիկական օգնության ցուցաբերում. «Ոչ ֆորմալ հատվածի գնահատում»

8. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ՄԱԿԲՈ ինթերնեյշնլ ինկ. Կազմակերպության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի ծրագրի օժանդակությամբ.

- 2010թ. Հայաստանի ժողովրդագրական և առողջության հետազոտություն,

9. ԵՀ/Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության օժանդակությամբ.

- ԵՀԲ-ի արևելյան տարածաշրջանում պարենի ապահովման որոշումների կայացման բարելավմանն ուղղված տեղեկատվական համակարգերի ծրագիր:

ՀՀ ԱՎԾ-ն Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակում՝ «ԵՄ ստանդարտներին համապատասխանող վիճակագրական մեթոդների ընդունում և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արդիականացում» ներքո. հիմնվելով ԵՄ

փորձագետների կողմից Հայաստանի վիճակագրական համակարգի ընդհանուր գնահատման վրա, վիճակագրական համապատասխան ոլորտներում եվրոպական ստանդարտներին համապատասխանելու նպատակով կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության մշակման և իրականացման, բիզնես ռեգիստրի որակի և ընդգրկման բարելավման, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցերի համաձայն գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստման և իրականացման. ԵՀԶ-ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ներքո իրականացրել է աշխատանքներ վիճակագրական դասակարգումների ներդրման («Վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգման (ՆԱԹՍ)», «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգման (ՆԷՅՍ վեր. 2)», տվյալների պահպանման և վիճակագրական գաղտնիության վերաբերյալ կանոնակարգերի ներդրման ուղղությամբ:

Թայքս գործիքի ներքո Երևանում կազմակերպվել են 2 սեմինար «Ծառայությունների վիճակագրություն» և «Վիճակագրական դասակարգումներ ու տնտեսական գործունեության տեսակների դասակարգում» թեմաներով:

ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո մշակվել և հաստատվել է «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» խորագրով ծրագրի (որակի կառավարման, գների ինդեքսների, ազգային հաշիվների համակարգի, բիզնես-վիճակագրության կատարելագործման, գյուղատնտեսության համատարած հաշվառման և տեղեկատվական հանրության վիճակագրության) պայմանագիրը (թիվ ENP/2010256-452): ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո մշակվել և ներկայացվել են հետևյալ ծրագրային առաջարկները.

1.«Սոցիալական և ժողովրդագրական վիճակագրություն» խորագրով ծրագրի շրջանակում բնակչության և ժողովրդագրության, աշխատանքի շուկայի վիճակագրության, աղքատության վիճակագրության, գիտության և տեխնիկայի վիճակագրության վերաբերյալ,

2.«Շրջակա միջավայրի վիճակագրության/Շրջակա միջավայրի սատելիտային հաշիվներ»,

3.«Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ» խորագրով ծրագրի շրջանակում տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման ինտեգրացված վիճակագրական տեղեկատվական համակարգի ստեղծման վերաբերյալ:

2010թ. մշակվել է ԴԵՎԻՆՖՈ 6.0/ԱՐՍԵՆԻԱԻՆՖՈ տվյալների բազան և զետեղվել www.armdevinfo.am կայքում հայերեն և անգլերեն լեզուներով, որը պաշտոնապես գործարկվել է 2010թ. սեպտեմբերի 10-ից:

2010թ. ՀՀ ԱՎԾ 62 աշխատակից 22 արտասահմանյան երկրում (Եգիպտոս, ԱՄՆ, Ֆրանսիա, Գրեգուանի Հանրապետություն, Գերմանիա, Շվեյցարիա, Ճապոնիա, Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Մոլդովա, Լեհաստանի Հանրապետություն, Ֆիլիպիններ, Դոմինիկյան Հանրապետություն, Դանիա, Բելառուս, Վրաստան, Բազախստան, Ուզբեկստան, Թուրքիա, Չեխիայի Հանրապետություն, Բելգիա, Նեպալ) վերապատրաստվել և մասնակցել են տարբեր միջոցառումների հետևյալ թեմաներով՝ Ժողովրդագրություն, ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 41-րդ նստաշրջան, «Մահացությունը և դրա պատճառները Կովկասյան երկրներում» ծրագրի շրջանակում Հայաստանի մահացության ցուցանիշների մասով ուսումնասիրում, միգրացիայի վիճակագրություն, մահացության պատճառների եվրոպական համապատասխա-

նություն և անհամապատասխանություն, ազգային հաշիվներ, շրջակա միջավայրի ցուցանիշներ, գենդերային վիճակագրություն, կանանց դեմ բռնությունների գնահատում, տեղեկատվության կառավարման և հարակից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառումը պաշտոնական վիճակագրության համար, ԴԵՎԻՆՖՈ-ի օգտագործումն ազգային զարգացման ռազմավարությունների մշտադիտարկման հարցում կառավարությունների և աջակցելու համար, զբոսաշրջության վիճակագրություն, մարդահամարների և կացարանների հաշվառումներ, ռազմավարական տնտեսական կարիքներ և անվտանգության կիրառում, սոցիալական պաշտպանության ինդեքսի ազդեցությունն աղքատության կրճատման վրա, ոչ ֆորմալ հատվածի վերաբերյալ Հայաստանի զեկույց, աջակցություն մարդահամարի անցկացման ժամանակ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործմանը-կարիքների գնահատում, մարդահամարի տվյալների վերլուծությունների վերաբերյալ կարիքների գնահատում, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» խորագրով ծրագիր, Բելառուսիայի վիճակագրության 90-ամյակին և վիճակագրության համաշխարհային օրվան նվիրված «Բելառուսիայի վիճակագրությունը. երեկ, այսօր, վաղը» խորագրով գիտաժողով, ԱՊՀ անդամ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի նստաշրջան, 2011թ. համար միջազգային գլոբալ համադրումների շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների ծրագիր, գյուղատնտեսական համատարած հաշվառում, գենդերային վիճակագրություն, ազգային վիճակագրական ծառայությունների համակարգող դերն ազգային վիճակագրական համակարգում, քաղաքային բնակավայրերում անվտանգ և առողջության համար օգտակար հետիոտնային և հեծանվային երթևեկություն, ՄԱԿ-ի գիտության, կրթության և մշակույթի կազմակերպության մշակույթի վիճակագրության համակարգը Միջին Ասիայում և Արևելյան Եվրոպայում, գիտության, տեխնոլոգիայի և նորամուծության վիճակագրություն և ցուցանիշներ, ՏՐԱՆՍՍՈՆԵԵ ծրագիր, ՀՀ հանրային ծառայողների բնապահպանական մոնիթորինգի, տեղեկատվության կառավարման և հաշվետվողականության կարողությունների զարգացում, Հազարամյակի զարգացման նպատակների ցուցանիշներ, ոչ ֆորմալ հատվածի և ոչ ֆորմալ զբաղվածության գնահատում, Եվրոպական Հարևանության և Գործընկերության գործիքի էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգի նախագծի իրականացման համար առաջնահերթություններ, ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի հերթական 44-րդ նստաշրջան, Գազախստանի վիճակագրությունը. արդյունքներն ու զարգացման հեռանկարները, արագ ահազանգման և բիզնես ցիկլի ցուցանիշներ, երեխաների և չափահասների շրջանում հարկադիր աշխատանքի տարածվածության գնահատման մեթոդաբանություն, կանանց դեմ բռնություններ, միջազգային համադրումների ծրագրի շրջանակում Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակի մասնագետներին մեթոդաբանական օժանդակության ցուցաբերում և սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների քննարկում և համաձայնեցում:

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և ներկայացվել է 9 զեկույց` 242 էջ ընդհանուր ծավալով:

2010 թվականին ՀՀ ԱՎԾ 236 աշխատակից միջազգային համագործակցության շրջանակում մասնակցել է ՀՀ տարածքում /Երևան, Ծաղկաձոր, Աղվերան/ կազմակերպված թվով 61 միջոցառումների /աշխատանքային հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ,

սեմինարներ, նիստեր, աշխատաժողովներ, ուսուցման դասընթացներ, խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ, կոնֆերանսներ, ֆորումներ/:

2010 թվականին ՀՀ ԱՎԾ է այցելել 6 հանձնախումբ, 16 փորձագետ Լատվիայի վիճակագրության կետրոնական բյուրոյից, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեից, Դանիայի վիճակագրական ծառայությունից, Ռումինիայի վիճակագրության ազգային ինստիտուտից, Հունգարիայի վիճակագրական կետրոնական ծառայությունից, Եվրոպական կետրոնական բանկից, Վարշավայի քաղաքապետարանից, Իտալիայի Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունից՝ ծառայությունների վիճակագրության վերաբերյալ երկօրյա սեմինարը վարելու, Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի գործունեությունը և հետագա աշխատանքները ԱՊՀ երկրների հետ համագործակցության շրջանակում քննարկելու, Դանիայի վիճակագրական ծառայության հետ հետագա համագործակցության հնարավորությունները քննարկելու, «Վիճակագրական դասակարգումներ» թեմայով սեմինարը վարելու, Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» նախագծի նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու և դրա պայմանագրի նախագիծը քննարկելու նպատակով:

2010 թվականին ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել է 7 սեմինար-շնորհանդես՝ նվիրված վիճակագրության տարբեր բնագավառներին, ՀՀ ԱՎԾ այցելած միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև արդի վիճակագրական գործիքակազմի կիրառման և ստացված ժամանակակից վիճակագրական գրականության շնորհանդեսներ, որոնց՝ ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 103 միավոր:

ՀՀ ԱՎԾ-ն վիճակագրության մասով մասնակցել է ՀՀ-ԵՄ Ասոցիացման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար ստեղծված բանակցային գործընթացի շրջանակում գործող տնտեսական, ֆինանսական և ոլորտային համագործակցության հարցերի խմբի աշխատանքներին:

Իրականացվել են բանակցություններ և քննարկումներ Համաշխարհային բանկի, Բուլղարիայի ազգային վիճակագրական ծառայության, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության, Ավստրիայի վիճակագրական ծառայության, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի փորձագետների, Իտալիայի, Նորվեգիայի, Հնդկաստանի և Շվեյցարիայի կառավարությունների ներկայացուցիչների հետ՝ ՀՀ 2011թ. մարդահամարին օժանդակելու վերաբերյալ, Համաշխարհային բանկի փորձագետների հետ TFSCB դրամաշնորհի շրջանակում, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի և ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում գյուղատնտեսության համատարած հաշվառման վերաբերյալ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետների հետ՝ «ԴԵՎԻՆՖՈ/ԱՐՄԵՆԻԱԻՆՖՈ» ծրագրի իրականացման, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետների հետ՝ «Մանկական աղքատություն» և ՏՐԱՆՍՍՈՆԵԵ ծրագրերի, Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների հետ՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի

շրջանակում «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» նախագծի իրականացման և հետագա համագործակցության հնարավորությունների վերաբերյալ, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) փորձագետների հետ՝ ՀՀ-ԵՄ Առցիացման համաձայնագրի բանակցային գործընթացի շուրջ:

2010թ. ՀՀ ԱՎԾ-ն իրականացրել է Եվրոստատի «Վիճակագրության և դրա հետ կապված տեղեկատվության հավաքագրում, հիմնավորում և հրապարակում թեկնածու երկրներից, պոտենցիալ թեկնածու երկրներից և Եվրոպական հարևանության քաղաքականության երկրներից» խորագրով նախագիծը:

Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում 2011թ. մարդահամարի անցկացմանն օժանդակելու նպատակով ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության հնարավոր դոնորների ցանկի, համապատասխան գրությունների, նամակների, նյութերի մշակման և թարգմանչական աշխատանքներ:

ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից 2010թ. հոկտեմբերի 20-ը Վիճակագրության Համաշխարհային օր հռչակելու և այն առաջին անգամ տոնելու կապակցությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ մամուլի հաղորդագրության, պաստառների, այլ նյութերի մշակման, խմբագրման և միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

ՀՀ ԱՎԾ միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացրել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ /թվով 1039/: Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2010թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 2 հրապարակում, 3 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 229 հարցումների:

2010թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 146 պաշտոնական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Տեղեկատվության միջպետական փոխանակման շրջանակում 2010թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 183 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից՝ 31-ը՝ ամսական, 26-ը՝ եռամսյակային և 126-ը՝ տարեկան պարբերականությամբ: Ընդ որում, բոլոր հարցաթերթերը նախատեսված է եղել ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: